

ԽՐՈՒԿԱԿ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

1960 թ. նոյեմբերի 18—20 Լենինականում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի գիտական սեսիան, նվիրված Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 10-ամյակին:

Սևսիան բացվեց Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի ղեկույումով, որը նվիրված էր Հայաստանում բիոլոգիական ակտիվ նյութերի քիմիայի զարգացման հիմնական հարցերին: Ինչպես նշեց ղեկուցողը, մինչև Սովետական կարգերի հաստատումը և հատկապես մինչև Ֆարմացեւտիկ լաբորատորիայի և հետազոտմ.՝ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի հիմնադրումը Հայաստանում բիոլոգիական ակտիվ նյութերի քիմիա փաստորեն գոյություն չուներ: Այժմ գիտություն արդ ճյուղի զարգացումը և առաջընթացը իր ճանաչումն է գտել ոչ միայն Սովետական միությունում, այլև նրա սահմաններից դուրս: Ինստիտուտում սինթեզվել և բիոլոգիական ստուգման են ենթարկվել ավելի քան 9000 օրիգինալ քիմիական միացություններ: Այդ քրտնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծվել են ոչ միայն բժշկական պրակտիկայում լայնորեն կիրառվող բազմաթիվ դեղանյութեր, այլև հայտնաբերվել են քիմիական կառուցվածքի և բիոլոգիական ակտիվության միջև եղած մի շարք օրինաչափություններ, որոնք հնարավորություններ են տալիս իրագործել որոշակի ազդեցություն ունեցող դեղանյութերի նպատակադրված սինթեզը:

Կուրարենման նյութերը և նրանց սինթետիկ անալոգները ղեկուցումով հանդես եկավ արոմատիկ միացությունների բաժնի վարիչ Հ. Լ. Մնջոյանը:

Վիրաբուժների կողմից ընդհանուր ճանաչություն գտած կուրարենման դիտիլին պրեպարատը ստեղծելուց հետո, մեծ աշխատանք է կատարվել երկարատև ազդող, և հատկապես, շնչառական մկանները չթուլացնող նոր կուրարենման պրեպարատների սինթեզի ուղղությամբ: Ստացված մի շարք դեղանյութեր (պիրոկլոլին, բրոմոտիլին և այլն) գտնվում են կլինիկական փորձարկման շրջանում:

Պրոֆեսոր Գ. Ա. Մեղնիկյանը հանգամանորեն վերլուծեց ժամանակակից անեսթեզիոլոգիայի բնագավառում մկանային ռելաքսանտների կիրառման խնդիրները: Կլինիկայում մկանային ռելաքսանտների գործածության մասին հանդես եկավ պրոֆեսոր Հ. Ս. Գևորգյանը: Հատուկ հետաքրքրություն առաջացրեց ղեկուցողը ղեկավարած վիրաբուժական կլինիկայում՝ դիտիլինի և նրա անալոգների կիրառման մեծ փորձի ամփոփումը:

Հիպոտենզիվ նյութերի ֆարմակոլոգիային էր նվիրված բիոլ. գիտ. թեկնածու Վ. Մ. Ավագյանի ղեկուցումը:

Գիտական սեսիայի երկրորդ նիստում զանգվերոնի և նրա անալոգների սինթեզը՝ ղեկուցումով հանդես եկավ հետերոցիկլիկ № 1 բաժնի վարիչ Վ. Գ.

Աֆրիկայան՝ Գանգլերոնը բազմակողմանի ֆարմակոլոգիական ազդեցութիւն ունեցող պրեպարատ է: Կլինիկայում հատուկ ուշադրութեան է արժանացել գանգլերոնի՝ սրտի պսակաձև անոթները լայնացնելու ընդունակութիւնը: Ի տարբերութիւն մինչ արժի կիրաւորող դեղանութեան (նիտրոգլիցերին և այլն), գանգլերոնը կանխում է պսակաձև անոթների նոր սպազմների առաջացումը: Այս բուժիչ հատկութեան շնորհիւ գանգլերոնը լայն կիրառում է գտել ստենոկարդիա (կրծքային հեղձուկ) հիվանդութեան բուժման ժամանակ: Գանգլերոնի շուրջ 800 անալոգների սխտեմատիկ սինթեզը և ֆարմակոլոգիական ուսումնասիրութիւնը հնարավորութիւն է տւել ընտրել մի շարք առավել ակտիւ միացութիւններ:

Գանգլերոնի ֆարմակոլոգիական ազդեցութեան մանրադննին վերլուծութեան էր նվիրւած բիոլ. գիտ. թեկնածու Ն. Ե. Հակոբյանի զեկուցումը:

Գանգլերոնի ազդեցութեան տակ ուժեղ փոփոխութեան է ենթարկւում աղեստամոքսային ուղիների հյութարտադրութեան և մոտորիկայի ընթացքը: Այդ տեսակետից հետաքրքիր էին Հայկ. ՍՍՌ ԳԱ թղթադից-անդամ Ս. Ա. Միրզոյանի ներկայացրած էքսպերիմենտալ տվյալները: Պարզվել է, որ գանգլերոնի և նրա անալոգների ազդեցութեան ուժը և ուղղութիւնը կախում ունեն ոչ միայն դեղնութիւնների դոզայից, այլև աղեստամոքսային ուղիների ֆունկցիոնալ վիճակից, ընդ որում որոշակի տարբերութիւն կա աղեստամոքսային ուղիների զանազան հատվածների ռեակցիայի մեջ:

Սպազմոլիտիկ նյութերի սինթեզին և նրանց ֆարմակոլոգիական ուսումնասիրութեան էին նվիրւած քիմ. գիտ. թեկնածու Հ. Լ. Պապայանի և բիոլ. գիտ. թեկնածու Ռ. Ռ. Սաֆրազբեկյանի զեկուցումները:

Այդ ուղղութեամբ ինստիտուտում կատարած հետևողական աշխատանքի շնորհիւ ստեղծվել են նոր դեղանյութեր (արիենալ, ֆուքրոմեզան, կվատեւերոն, ցիպենամ և այլն) որոնք կիրառւում են, կամ գտնվում են կլինիկական փորձարկման շրջանում արնայի հիվանդութիւնների բուժման ժամանակ: որոնց զարգացման մեջ մեծ նշանակութիւն է տրվում հարթ մկանաթելերի կծկմանը (բրոնխիալ տոսթմա, հիպերտոնիա և այլն):

Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում ստուգվում է նաև սինթեզված պրեպարատների ազդեցութիւնը զանազան հիվանդածին մանրէների և միաբջջիների վրա: Այդ ուղղութեամբ կատարված աշխատանքի մի հատվածի մասին, Շալարախտի քիմիոթերապիան՝ զեկուցումով հանգես կկալ բիոլ. գիտ. թեկնածու Լ. Գ. Ժուրուլին: Ձեկուցողը նշեց, որ չնայած ակտիւ դեղանյութերի առկայութեանը (պասկ, ֆտիլազիդ, ստրեպտոմիցին) պալարախտի քիմիոթերապիայի հարցը չի կորցրել իր արժանակատեցութիւնը, որովհետև վերոհիշյալ դեղանյութերի հանդեպ պալարախտի հարուցիչները ժամանակի ընթացքում ձեռք են բերել քիմիոկալանութիւն:

Ինստիտուտում կատարված քրտնաշան աշխատանքի շնորհիւ ստեղծվել են մի քանի ակտիւ պրեպարատներ, որոնք մանրազննին փորձական հետազոտութիւններից հետո կներկայացվեն կլինիկական կիրառման համար:

Գիտական սեսիայի բոլոր զեկուցումները լսվեցին մեծ հետաքրքրութեամբ: Սեսիան հնարավորութիւն տվեց ծանոթացնել Ռեսպուբլիկայի երկրորդ քաղաքի աշխատավորներին և հատկապես բժշկական աշխատողներին բիոլոգիական ակտիւ նյութերի քիմիայի և ֆարմակոլոգիայի ճանաչման ու նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ձեռք բերած նվաճումներին:

Վ. Մ. Ավագյան